Արձանագրություն 3

«Վեդու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Վեդի

18. 06.2021թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Ս. Խաչատրյան – «Վեդու բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն

Անդամներ
Ա. Հակոբյան - «Վեդու բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի մեխանիկ
Վ. Բաղումյան - «Վեդու բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի գնորդ
Լ. Գևորգյան- «Վեդու բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի օպերատոր
Ս. Մկրտչյան- «Վեդու բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի լաբորանտ

Քարտուղար-գնումների համակարգող - Գ.Ամիրջանյան

1. Տվյալներ 1, 2, 3, 10, 28, 32, 35, 52 և 56-րդ չափաբաժինների գների նվազեցման շուրջ բանակցությունների մասով

(Ս. Խաչատրյան)

1. 1 «ՎԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/24» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կազմակերպված գների նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցել է «Սամնան» ՍՊԸ-ն և «Դեյուքս Պրինտ» ՍՊԸ-ն: Նշված ընկերությունների կողմից ներկայացվել է վերանայված նոր գնային առաջարկներ: «Սամնան» ՍՊԸ-ի կողմից 1, 2 և 3 –րդ չափաբաժինների մասով: «Դեյուքս Պրինտ» ՍՊԸ-ի կողմից 1, 2, 3, 10, 28, 32, 35 և 52-րդ չափաբաժինների մասով (կցվում է): Հաշվի առնելով , որ «Դեյուքս Պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նոր նվազեցված գնային առաջարկները 1, 2, 3 և 10-րդ չափաբաժինների մասով գերազանցում են գնման հայտով սահմանված գինը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի « գ » պարբերության դրույթներով գնահատող հանձնաժողովը բանակցությունների արդյունքում «Դեյուքս Պրինտ» ՍՊԸ-ին հայտարարել է ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականությունները նշված չափաբաժինների մասով ուժի մեջ կմտնեն գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ աշխատանքի կատարման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը նշված չափաբաժինների մասով լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: 56-րդ չափաբաժնի մասով նոր գնային առաջարկ չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. «ՎԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/24» ծածկագրով գնման ընթացակարգը թիվ 56-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին

(Ս. Խաչատրյան)

2.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «է» պարբերության դրույթներով «ՎԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/24» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած 56-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. «ՎԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին

3.1 Ստորև ներկայացվում է «ՎԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/24» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների ցանկը՝ ըստ չափաբաժինների

Ընտրված մասնակից	Չափաբաժնի համար
«Հայկարլի» ՓԲԸ	4, 5, 7, 8, 9, 11, 12, 13, 14, 15, 19, 22, 23, 24, 26, 29, 30, 31, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 55, 59, 60, 61, 64, 65, 67
«ԴԵԼՅՈՒՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ	1, 2, 3, 6, 10, 16, 17, 18, 20, 25, 27, 28, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 52, 53, 54, 57, 58, 62, 63, 66, 68, 69
Աննա Սահակյան ԱՁ	21

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. «ՎԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանել անգործության ժամկետ 5 օր:
- Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Հակոբյան

_____ Վ. Բաղումյան

_____ Ս. Մկրտչյան

_____ Լ. Գևորգյան

Քարտուղար՝ _____ Գ. Ամիրջանյան

Հավելված 2
«ՎԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/24» ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ՆՈՐ ԳՆԱՑԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ՎԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/24» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «ԴԵԼՅՈՒՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1.	Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտ	38000 Երեսունութ հազար		38000 Երեսունութ հազար
2.	Մեծահասակի հիվանդության պատմագիր	16800 Տասնվեց հազար ութ հարյուր		16800 Տասնվեց հազար ութ հարյուր
3.	Հղիի և ծննդկանի անհատականքարտ	21000 քսանմեկ հազար		21000 Քսանմեկ հազար
10.	Համավճարի պայմանագիր	1900 Մեկ հազար ինը հարյուր		1900 Մեկ հազար ինը հարյուր
28.	Քաղվածք ՀՆ N 027/y A5	1190 մեկ հազար մեկ հարյուր ինսուն		1190 մեկ հազար մեկ հարյուր ինսուն
32.	Վիճակագրական քարտ հ/պ. ձև N-066/ու A5	1700 Մեկ հազար յոթ հարյուր		1700 Մեկ հազար յոթ հարյուր
35.	Վճարովի պալատներից օգտվելու ծառայությունների մատուցման պայմանագիր	1400 Մեկ հազար չորս հարյուր		1400 Մեկ հազար չորս հարյուր
52.	Հղի ամենօրյա սննդակարգ A5	1700 Մեկ հազար յոթ հարյուր		1700 Մեկ հազար յոթ հարյուր
56.	Տուցակ հայփոստ ՊՓԲԸ հանձնվածնամակների A4	2000 Երկու հազար		2000 Երկու հազար

«ԴԵԼՅՈՒՔՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ տնօրեն Սամվել Հովհաննիսյան

Digitally signed by HOVHANNISYAN SAMVEL 2407970730
Date: 2021.06.18 14:55:25 AMST

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն հայտնում է, որ «Վեղու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՎԲԿ-ԳՀԱԵՁԲ-21/24» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման գնում կատարելու ընթացակարգի հայտի 1, 2, 3, 4 չափաբաժինների համար նախատեսել է հետևյալ իջեցված գները՝

1 չափաբաժին՝ 39.000 երեսունինը հազար ՀՀ դրամ
2 չափաբաժին՝ 17.500 տասնյոթ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ
3 չափաբաժին՝ 22.100 քսաներկու հազար հարյուր ՀՀ դրամ
4 չափաբաժին՝ 8.600 ութ հազար վեց հարյուր ՀՀ դրամ

«ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Մանվել Հայրապետյան _____
ստորագրություն

Կ.Տ

ZAKARYAN RITA 7810550489 Digitally signed by ZAKARYAN RITA 7810550489
Date: 2021.06.16 16:42:52 AMST